

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի՝
Կոտայքի մարզ կատարած աշխատանքային այցի

ք. Ծաղկաձոր

02.02.2017թ. ժամը 16.⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆՆԵՐ

- Գ.Լոքյան.-ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար
- Տ. Խաչատրյան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
- Ռ.Մակարյան - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
- Տ.Սահակյան- ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Գ.Մարտիրոսյան-ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական
- Ա.Հարությունյան- Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
- Զ.Զեյթունցյան-Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ
- Ա.Կիրակոսյան-Տարածքային զարգացման հիմնադրամի տնօրեն
- Շ.Մարդարյան, Ա.Ավակյան-ՀՀ վարչապետի խորհրդականներ
- Ա.Մարգարյան, Ա.Վարդևանյան, Նարեկ Ադոնց-ՀՀ վարչապետի օգնականներ
- Կ. Մարգարյան, Հ. Հայրապետյան, Մ.Մանասյան-ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
- Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Կոտայքի մարզի համայնքների ղեկավարներ, ուսումնական հաստատությունների և առողջապահական հիմնարկների տնօրեններ

ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Գուլոյանը ներկայացրեց մարզը բնութագրող հիմնական ցուցանիշները, զարգացմանն ուղղված միջոցառումներն ու ծրագրերը: Մարզպետը, մասնավորապես, տեղեկացրեց, որ նախատեսվում է 2017թ. հաստիքների կրճատում կրթության և առողջապահության ոլորտներում, ինչի արդյունքում կտնտեսվի մոտ 104 մլն ՀՀ դրամ: Համայնքներում նախատեսվում է արևային էներգիայի արտադրության կայանների և նոր ջերմոցային տնտեսության հիմնում, զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացում:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության վարչության պետ Մ.Եղիազարյանը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ.Ոսկանյանը, ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական Հ.Ադամյանը ներկայացրին կրթության, առողջապահության և գյուղատնտեսության բնագավառներում առկա իրավիճակը, հիմնական խնդիրները, ծրագրերն ու հետագա անելիքները:

ՀՀ վարչապետը նշեց, որ գյուղատնտեսության ոլորտում ծրագրերն ուղղվելու են այն նախաձեռնություններին, որոնք տնտեսապես շահավետ են, ունեն տրամաբանություն, հեռանկարներ, նվազեցնելու են ծախսերն ու ռիսկերը, ավելացնելու եկամտաբերությունը:

Գործադիրի ղեկավարը կարևորեց մարզի բուժօգնականների կառավարման գործում մասնավոր կառավարիչների ներգրավումը, պետական և մասնավոր հատվածների մրցունակության ապահովումը, ինչը կնպաստի բնակչության բուժսպասարկման որակի բարձրացմանը: Նա առաջարկեց կտրուկ մեծացնել 2017թ. համար վճարովի ծառայությունների պլանը:


ՀՀ վարչապետն անդրադարձավ նաև կրթական համակարգի բարեփոխման հարցին՝ կարևորելով ոլորտում թե՛ կադրային, թե՛ շենքային օպտիմալացումը: Վարչապետին ամփոփ տեղեկատվություն ներկայացվեց նաև մարզում բիզնես միջավայրի ընդհանուր վիճակի, ձեռնարկությունների քանակի, գործունեության ոլորտների, զբաղվածության մակարդակի, ընթացիկ և նախատեսվող ծրագրերի վերաբերյալ: Մարզի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարները ներկայացրին զարգացմանը վերաբերող առաջարկություններ և ստացան համապատասխան պարզաբանումներ:

Արուսյանի քաղաքապետ Վ.Գևորգյանը, մասնավորապես, ներկայացրեց Արուսյանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ազատականացված գոտի դարձնելու ծրագիրը:

Ծաղկաձորի քաղաքապետ Ա.Հարությունյանը ներկայացրեց քաղաքում զբոսաշրջության և հյուրանոցային բիզնեսի խթանման ծրագիրը:

Կառավարության ղեկավարին ներկայացվեցին նաև մի շարք ներդրումային ծրագրերի առաջարկություններ, որոնք վերաբերում են արևային կայանների և ջերմոցների ստեղծմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, կաշվե իրերի արտադրության հիմնանը, ինտենսիվ կաթիլային համակարգով ոռոգվող այգիների ստեղծմանը, արդեն գործող բիզնեսների ընդլայնմանը և այլն:

ՀՀ վարչապետն ողջունեց և կարևորեց հնչած գաղափարները՝ առաջարկելով մեկամսյա ժամկետում դրանք ձևակերպել բիզնես տրամաբանությամբ և ներկայացնել կառավարության քննարկմանը:

 Կ. ԳՈՒՂՈՅԱՆ

Հանձնարարականներ ՀՀ վարչապետի հետ հանդիպման ժամանակ քննարկված հարցերի վերաբերյալ

1. Մարզպետարանի աշխատակազմի սպորտաբաժանումներին՝

Մանրակրկիտ ուսումնասիրել մարզի անձնագիրը, գտնել գերակա խնդիրների լուծման ռեալ ծրագրեր, համադրական համեմատականներով պարզել համայնքային բյուջեների պլանավորման արդյունավետությունն ու ռեալությունը և արդյունքների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

2. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը՝

2.1) Գործնական քայլեր ձեռնարկել գյուղացիական ու ֆերմերական տնտեսությունների խոշորացման, կոոպերատիվների ստեղծման ու ավելացման ուղղությամբ:

2.2) Պարզել մարզի վարելահողերի չօգտագործման պատճառները և առաջարկություն ներկայացնել ՀՀ ՏԿ և զարգացման նախարարություն՝ հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

2.3) Մեքենատրակտորային կայանների ստեղծման, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման վերաբերյալ մեկամսյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՀՀ գյուղնախարարություն:

2.4) ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը առաջարկություն ներկայացնել գյուղացիական տնտեսություններում ապահովագրական համակարգ ներդնելու վերաբերյալ:

2.5) Ուսումնական և կրթական ծրագրերի իրականացման միջոցով բարձրացնել ֆերմերների և գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող տնտավարողների տեսական ու գործնական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝

3.1) Մեկ ամսվա ընթացքում ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել առաջարկությունների և ծրագրերի փաթեթ՝ մարզում առողջապահական համակարգի արդյունավետ կառավարման և մրցակցային դաշտի ընդլայնման վերաբերյալ:

3.2) 2017 թվականի աշխատանքային պլանում ավելացնել վճարովի ծառայությունների թիվը, համակարգը ներդրումային առումով դարձնել գրավիչ:

4. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝

3.1) Ամփոփել մարզի հանրակրթական դպրոցների օպտիմալացման ծրագրերի արդյունքները:

3.2) Առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարություն՝ փոքր համակազմ ունեցող ուսումնական հաստատություններում օգտագործվող գազի գնի զեղչման և դպրոցական բուֆետների սննդի ձեռքբերման որակի ու պահպանման ժամկետների մասին օրենքում փոփոխությունների կանոնակարգման վերաբերյալ:

5. Մարզպետարանի աշխատակազմի ծրագրերի և վերլուծության բաժնին՝

